կղեմէս կալանոս[1], Զամչեան[2], Աւգերեան[3], Ագոնց[4], Ալիշան[5], և Սուրբին վերջին կենսագիրը՝ Պերիկղէս քահանայ Ալտինի[6] են։

Պարոնիոս յետ երկար պատմելու Ս. Սիմէոնի ուխտագնացութիւնն Հռոմի մէջ՝ սուղ ոճով մը կ'ըսէ թէ շրջեցաւ այցելելով Իտալիոյ, Գաղղիոյ և Սպանիոյ սրբավայրերը։ Աւգերեան ալ համառօտիւ կ'ըսէ. «Այլ ի փառաւորիլ իւրում՝ խոյս ետ ի Հռովմայ... և գնացուցեալ զկաղս, որպէս յերթալն ի Սպանիա՝ եբաց զաչս կուրի միոյ և բժշկեաց զայսահար դուստր արքային» են։

Կ'արժէ սակայն հոս մէջ բերել Զամչեանէ՝ մեզի կարեւոր հատուածը, որ սուրբին հնագոյն կենսագրութիւնէն է՝ հրատարակուած Բոլլանդեանց ձեռքով.

«Իսկ Սիմէոն շրջեալ այնուհետեւ (հարաւային Գաղղիոյ կողմերը) հետիոտս ի բազում ուխտատեղիս՝ արար և զայլ բազում նշանս բժշկելով զկոյրս, գնացուցանելով զկաղս են. որպէս է տեսանել ի վարս նորա։

Եւ ապա յուղի անկաւ դիմել ի Սպանիա. և ի ճանապարհի տեսեալ զկոյր ոմն նստեալ առ ափն գետոյ՝ ասէ ցնա. Ելդ՝ բայր, լուացարուք զձեռս մեր և զերեսս ջրով գետոյս և ի միասին փութացարուք երթալ տեսանել զպատարագ. զի հնչեցուցանեն զզանգակ. և կոյրն անսացեալ նմա՝ լուացաւ. և ապա մատեաւ երանելին և ինքնին սրբեաց թաշկինակաւ զջուրն յերեսաց կուրին. և նոյն ժամայն բացան աչք նորա, և գնաց զհետ սրբոյն, և ոչ երբէք մեկնեցաւ ի նմանէ։ Հասեալ սրբոյն ի Սպանիա՝ գնաց ի քաղաքն Կոմպոստեղայ յուխտ Սրբոյն Յակոբայ առաքելոյ։ Ազդ եղեւ թագաւորի տեղւոյն համբաւ երանելւոյն. և զի էր նորա դուստր մի այսահար, աղաչեաց զնա վասն նորա և սուրբն աղօթիւք եհան զդեւն։ Եւ ի մատուցանել նմա արքայի ինչս բազում՝ ոչինչ էառ ի նմանէ. և խոյս ետ անտի։ Զկնի այսորիկ գնացեալ ի Բրիտանիա, և յետոյ ի Գաղղիա, եկն ապա և զտեղի էառ յիտալիա ի սահմանս քաղաքին Մանտուայու՝ որ և ասի Մանտովա, և բնակեցաւ ի մենարանի միում կրօնաւորաց ի կարգէ սրբոյն Բենեդիկտոսի արքայի, ի վանսն կոչեցեալ Պադուլիան են...։ Արար և ի քաղաքի անդ բազում հրաշս, որպէս գրեալ է ի վարս սրբոյն։ Եւ զկնի այսր ամենայնի եհաս նմա հրաւէր կոչման ի Յեառնէ, և վախճանեալ փոխեցաւ յամի Յեառն 1016 ի Յուլիսի 26, և թաղեցաւ ի նոյն վանս» են։

Ալիշան ալ յիշեալ գրաբար կենսագրութեան մէջ (Բզմվպ. 1884) հոգեշունչ կերպով կը նկարագրէ Ս. Սիմէոնի ուխտագնացութիւնը Առաքելոց շիրիմներուն՝ դէպի Իտալիա և Սպանիա. «Ելցուք արդ զհետ Սրբոյն (Սիմէոնի)... Նախ յակնն տիեզերաց դիմեալ և ի գլուխ հաւատոց՝ ի մեծն Հռովմ, և անդ առաջի հայրապետին և ամենայն եկեղեցւոյն վկայեալ ուղիղ դաւանութեան նորա և սրբութեան վարուց[7], և հրաւիրեալ ի յաջորդէն Պետրոսի կալ մնալ ի Հռովմ, խոյս տայր ի փառացն և եր-

---

1. Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Ս. Եկեղեցւոյն Հռովմայ, Ա. հտ. – Conciliationis Ecclesiæ Armenæ cum Romana etc. Ia pars, էջ 220–224, տպ. Հռոմ 1690. Կալանոս պարզապէս Պարոնիոսէ կ'առնէ Ս. Սիմէոնի վարքը։

2. Պատմ. Հայոց. հտ. Բ. Գիրք Դ. էջ 860–866։

3. Լիակատար Վարք Սրբոց, հտ. ԺԲ. «Մնացորդք վարուց սրբոց արտաքոյ Տօնացուցին մերոյ, յիշատակելոց ի Յայսմաւուրս կամ ի Ճառընտիրս Հայոց, որպէս և Յունաց և Լատինացւոց», էջ 342–344. տպ. Վ. Ս. Ղ. 1815։

4. Աշխարհագր. Եւրոպա. Իտալիա «Մանտուա», էջ 497։

5. Բազմավէպ 1884, էջ 5–17 «Ս. Սիմէոն ճգնաւոր և սարկաւագ հայկազն», հանդերձ թարգմանութեամբ լատին տաղերու՝ Ս. Սիմէոնի նուիրուած։ Տե՛ս նաև «Նուագք» Գ. հտ. «Առ Ս. Սիմէոն հայկազն յեղր Պադուսի»։

6. Vita di S. Simeone diacono ed eremita են. 1924. տպ. Mantova – Rovigo.

7. «Ի Լատերան, ուր ժողով առնէր Բենեդիկտոս Ի (յամին 983), և գտանէր անդ եպս. մի հայ, որ խօսեալ ընդ Սիմէոնի յերկար հայերէն, քննելով զուստն նորա և զորպէս, ծանուցանէ պապին զուղղափառ հաւատս նորա»։